«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը

Առարկա ՝ Տարրական դասարաններ (դասվարներ)

Ուսուցիչ ՝ Գայանե Համբարձումյան

Դպրոց՝ Վահան Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորում 4

Եզրակացություն 15

Գրականության ցանկ 166

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ հետազոտական աշխատանքն ուսումնասիրում է կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը, համագործակցային ուսուցման արդյունավետությունը թիմային աշխատանքներ կատարելիս, ինչպես նաև անհատի ձևավորման և կրտսեր դպրոցականների մոտ ինքնուրույն մտածելակերպի զարգացման արդյունավետությունը դասական և ժամանակակից ուսուցման մեթոդների ու հնարների և տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաների համակցման արդյունքում:

Այս աշխատանքում համառոտ կներկայացնեմ համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում , ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ, համագործակցային ուսուցման խմբերի տեսակները, ուսուցման մեթոդները, հիմնական տարրերը և աշակերտների՝ իրենց իսկ կողմից համատեղ ուժերով մշակված թիմային աշխատանքի կանոնակարգը, ըստ որի էլ կազմակերպվում է համագործակցային ուսուցման գործընթացը:

Այս հետազոտական աշխատանքը կատարելու համար ուսուցման գործընթացում իմ աշակերտների հետ անցկացրել եմ գործնական բնույթի աշխատանք, որի ընթացքը, արդյունքներն ու դրանցից բխող եզրահանգումները կներկայացնեմ հետազոտական աշխատանքիս վերջին՝ եզրակացության բաժնում:

Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորում

Վերջին ժամանակներում բազմաթիվ երկրներում կրթության ոլորտում լայն տարածում է ստացել համագործակցային ուսուցումը: Մի շարք մասնագետների կողմից համագործակցային ուսուցումը դիտարկվում է որպես այլընտրանքային մանկավարժություն, մեկ այլ դեպքում՝ որպես մանկավարժական մոտեցում (Պ. Սահլբերգ), ոմանք էլ այն դիտարկում են որպես ուսուցման յուրահատուկ թափանցող տեխնոլոգիա և մանկավարժական շատ տեխնոլոգիաների բաղկացուցիչ մաս (Գ.Կ.Մելեվկո):

Այդուհանդերձ , հարկ է փաստել, որ համագործակցային ուսուցման գաղափարների ձևավորումը և զարգացման ներկայիս մակարդակը մասնագետների մի քանի սերնդի աշխատանքի արդյունք է, սակայն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների սոցիալական փոխկախվածության կարևորության գաղափարը 20-րդ դարի 60-ական թվականներին զարգացվեց Մորտոն Դուտչի կողմից, որը մշակեց ուսումնական գործընթացում սոցիալական փոխկախվածության մանրակրկիտ մոդելը (անհատական, մրցակցային, խմբային:

Իսկ որն է համագործակցային ուսուցման էությունը:Արդեն իսկ անվանումը մեզ հուշում է, որ այն ուսուցում է՝ հիմնված համատեղ գործունեության վրա: Իսկ «համատեղ գործունեությունն» էլ իր հերթին ենթադրում է, որ գործ ունենք հարաբերությունների բազմակողմ համակարգի հետ: Այն ենթադրում է ուսուցիչ-աշակերտ կամ աշակերտ-աշակերտ տարբերակված ու առանձնացված փոխհարաբերություններ , շեշտադրվում են ոչ թե և ոչ այնքան փոխհարաբերությունների այս կամ այն ձևի փոփոխումն ու կարևորությունը ուսումնական գործընթացում, այլ նաև փոքր խմբային աշխատանքն ու փոխհարաբերությունները:

Ավանդական ուսուցման ժամանակ,ուսուցիչը իրականում հանդես է գալիս սովորեցնողի, ներգործողի, իսկ աշակերտը՝ սովորողի,ներգործությունը պասիվ ընդունողի դերում, ապա համագործակցայինուսուցման դեպքում թե՛ուսուցիչը, թե՛ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման գործընթացի ակտիվ կառուցողներ, համագործակցողներ:

Ավանդական ուսուցման ժամանակ շեշտը դրվում է ուսուցչի արտաքին ակտիվության վրա, որը բերում է այնպիսի դասավանդման, որի կենտրոնում ուսուցիչն է: Նման իրավիճակում ուսուցման գործի ողջ պատասխանատվությունը կրում է ուսուցիչը, իսկ աշակերտները միայն պասիվ ընկալողներ են: Մինչդեռ համագործակցային ուսուցման ժամանակ ուսուցիչը տեղեկություններ տրամադրողից և ղեկավարողից դառնում է ուսումնառության գործընթացը կառուցող: Արդյունքում ստեղծվում է համագործակցային մի միջավայր, որտեղ արդյունավետ սոցիալական փոխկախվածությունը հանգեցնում է նրան, որ

ուսուցիչն ու աշակերտները հանդես են գալիս միաժամանակ երկու դերում. և՛ սովորողի, և՛ սովորեցնողի:

Համագործակցային ուսուցումն այսօր արդեն դարձել է անհրաժեշտ ու կարևոր: Համագործակցային ուսուցման պատշաճ կիրառումը կարող է նպաստել հետևյալին.

- միմյանց հետ արդյունավետ, ստեղծագործաբար աշխատել սովորելուն,
- ընդլայնելու տեղեկատվության կիրառման հնարավորությունները,
- որոշումներ կայացնել, սովորել գործընկերների հետ մտքեր փոխանակել, ունենալ հետադարձ կապ,
- բազմաբովանդակ նյութերի առավել արդյունավետ յուրացմանը,
- ինքնուրույն որոշումներ կայացնող, կամքի ուժ ունեցող անհատի ձևավորմանը:

Համագործակցային ուսուցումը, որպես ուսուցման նոր մոտեցում, լայն տարածում է գտել աշխարհում: Ուսուցման արդյունավետ իրականացումը բարդ խնդիր է.

հարկավոր է նորովի մոտենալ, մտածել և կենտրոնանալ համատեղ ուսուցման գործընթացի և հմտությունների ձեռքբերման գործընթացում առաջացող խնդիրների վրա:

Համագործակցային ուսուցումը դրականորեն կվերափոխի և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների, և՛ ծնողների վերաբերմունքն ու մոտեցումները՝ ուղղված դպրոցին:

Ըստ Վեսա Պուրոկուրու՝ համագործակցային ուսուցման գլխավոր նպատակն է մտածելու գործընթացը ուղղորդելն ու սատարելը և ոչ թե արդեն հայտնին կրկնելը:

Գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների , սոցիալական կարգավիճակի, շրջակա միջավայրի, արտաքին և ներքին ազդակների և իհարկե, կրթական համակարգի բարեփոխումների շնորհիվ, աշխարհը փոխվում է արագընթաց տեմպով:

Կրթության ոլորտում դասավանդման և ուսուցման հնացած ձևերն այլևս անկարող են զարգացնել այնպիսի գիտելիքներ ու հմտություններ, որոնք խիստ կարևոր և անհրաժեշտ են ժամանակակից մարդուն ապահով, բարեկեցիկ կյանքով ապրելու և աշխատելու համար:

Հայտնի է, որ ուսուցումը բարդ և միաժամանակ ակտիվ գործընթաց է: Մանկավարժության մեջտարածված կարծիքի համաձայն՝ ուսուցումը պիտի ունենա ստեղծագործական-հետազոտական ուղղվածություն: Կրտսեր դպրոցականների մեջ հետազոտական, ասեղծագործական և ճանաչողական ունակությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել ուսումնական գործընթացը ստեղծագործականի վերածելու հնարներ: Այս պարագայում մեծ և որոշիչ նշանակություն ունի ուսուցչի անմիջական աջակցումը և ուղղորդող դիրքորոշումը: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար՝ խմբի անդամներին ուղղորդելու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է ապահովի

խմբի անդամների միջև դրական փոխկախվածությունը: Հիմք ընդունելով Պասի Սահլբերգի այն պնդումը,որ ուսուցիչը չի կարող սովորեցնել, այլ միայն կարող է օգնել և աջակցել ուսուցմանը, ապահովել լավ և որակյալ ուսուցմանն անհրաժեշտ համապատասխան ուսումնական միջավայր, նյութեր և գործընթաց, կարելի է եզրակացնել, որ ուսուցչի հիմնական դերն ու նպատակը աշակերտին մոտիվացնելն է՝ գիտելիքներ ձեռք բերելու համար, ստեղծել մտածելու հնարավորություններ, կազմակերպել ու առաջնորդել նրանց փորձառության ձեռքբերումը:

Հայտնի է, որ հատկապես կրտսեր դպրոցականները հաճույքով են մասնակցում ուսումնական գործընթացին, երբ այն անց է կացվում խաղային տեխնոլոգիաներով, համագործակցային խմբերով և մրցակցության սկզբունքով:

Համագործակցային խմբերի տեսակներն են.

- Ֆորմալ խմբեր- այս խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Ռազմավարությունը հետևյալն է՝

  ա. ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,

  բ. խմբի անդամները ընտրվում են պատահականորեն,

  գ. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,

  դ. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

- Ոչ ֆորմալ խմբեր- ժամանակավոր գործող խմբեր են՝ դասախոսությունների, ֆիլմեր դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցվող նյութի վրա կենտրոնացնելու նպատակ ունի:
- Հենակետային խմբեր՝կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր, որոնց աշխատանքը ընթանում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակում:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1. աշակերտների թիմային առաջադիմություն,

2. խճանկար,

3. շրջագայություն պատկերասրահում,

4. երեք բանալի և մեկ կողպեք,

5. հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1-ին մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար: Առավելություններից է այն, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտի, և՛ խմբին:

2-րդ մեթոդի փուլերն են.

ա. նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,

բ. աշխատանք փորձագիտական խմբում,

գ. աշխատանք ուսումնական խմբում,

դ. ավարտական աշխատանք,

ե. ամփոփում:

3-րդ մեթոդը 2-րդ մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտությունների զարգացում:

4-րդ մեթոդը կարելի է կիրառել իմաստի ընկալման փուլում: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն

կատարելու,գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, նաև իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

5-րդ մեթոդը կարելի է կիրառել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից ու թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում 5 րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում ենք աշխատանքը և ունկնդրում մի քանի գրած շարադրանք:

Աշխատանքային երկար ու ձիգ տարիների ընթացքում ձեռք բերած փորձառությունից ելնելով, եկել եմ այն համոզման, որ իրապես է՛լ ավելի արդյունավետ է ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ այն լինի

ա. հաճելի և հետաքրքիր,

բ. ցանկալի և սպասված,

գ. դյուրին և հասկանալի,

ե. ժամանակին համահունչ և գործնականում կիրառելի:

Այս ամենն ապահովելու համար հարկավոր է կիրառել ուսուցման կազմակերպման համատեղ սովորելու եղանակ, ըստ որի խմբի յուրաքանչյուր անդամ ակտիվորեն ներգրավված է դասապրոցեսում, և գիտելիքը մշակում և հարմարեցվում է վերափոխման միջոցով, մեկը մյուսին օգնում են՝ ըմբռնելու նյութը:

Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց իմացական կառույցները և հմտությունները՝ բացատրելու, խոսելու, վիճարկելու և տարակուսելու, հարցեր տալու և միմյանց ընկալելու միջոցով:

Բնական է, որ երեխան ունենում է հույզեր, ապրումներ, երբ հայտնվում է իր կողմից դեռ չբացահայտված անծանոթ միջավայրում՝ դպրոցում: Առաջին հերթին նա պետք է զգա, որ իրեն սիրում են, որ ինքը ձեռք է բերելու նոր ընկերներ, համագործակցելու է նրանց հետ, անմիջական մասնակցություն է ունենալու

հաճելի ու հետաքրքիր աշխատանքային այն գործընթացին, որը կնպաստի ինքնավստահ և կամային ուժեղ հատկանիշներով օժտված անհատի ձևավորմանը: Այսինքն՝ երեխան հոգեբանորեն պետք է պատրաստ լինի իր հասակակիցների հետ շփվել, հարաբերվել, աշխատել և սովորել:

Արեհեստավարժ ուսուցչի ճիշտ և սրտացավ վերաբերմունքի շնորհիվ երեխաները կարողանում են սահուն և վստահ քայլերով ներգրավվել ուսումնական գործընթացին: Որպես կանոն՝ կրտսեր դպրոցականները սիրում են կատարել խմբային աշխատանքներ: Այդ աշխատանքներն օգնում են երեխաների հետաքրքրասիրության խթանմանը և ստեղծագործական ակտիվության զարգացմանը: Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Ի տարբերություն համագործակցային ուսուցման, ավանդական խմբային աշխատանքը չունի սկզբունք և առանձնահատուկ կառուցվածք: Խմբային աշխատանքի ընթացքում որոշ երեխաներ մշտապես զբաղեցնում են առաջատարի «ղեկը»: Աշխատանքի ժամանակ ողջ ծանրությունը ընկնում է առավել ակտիվ և ընդունակ աշակերտի վրա:Նրանք է՛լ ավելի են ակտիվանում, խորացնում իրենց գիտելիքները: Եվ ճիշտ հակառակը՝ պասիվ, ոչ համարձակ, իրենց սեփական ուժերին թերահավատ երեխաները կրկին մնում են ստվերում: Հետևաբար, որպեսզի ուսուցման գործընթացը չտուժի ու լինի առավել արդյունավետ և միաժամանակ պասիվ երեխան ձեռք բերի ինքնավստահություն, հարկավոր է գործել այնպես, որ նախաձեռնողների հետ աշխատելիս անգամ պասիվներն ակտիվանան և աստիճանաբար դառնան առաջատարներ:

Հետևաբար կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողությունների ձևավորումը պետք է սկսել հենց առաջին դասարանից:

Համագործակցային ուսուցման հիմնական նպատակը խմբի յուրաքանչյուր անդամին ավելի ուժեղ և ինքնուրույն դարձնելն է:Աշակերտները սովորում են միասին, հաղթահարում են դժվարությունները համատեղ ուժերով, ինչը կօգնի նրանց հետագայում ձևավորվել որպես ուժեղ անհատներ.

«Այն, ինչ այսօր երեխաները կարող են անել միասին, վաղը նրանք այդ կանեն միայնակ»:

Լև Վիգոտսկի

Ինչ խոսք, համագործակցային ուսուցումը անպայմանորեն ենթադրում է խմբային աշխատանք, սակայն սա ավելին է, քան սովորական խմբային աշխատանքը: Այն սովորողներից պահանջում է նաև՝

ա. հավատալ, որ իրենք «միևնույն նավակում են» (դրական փոխկախվածություն),

բ. աշխատել դեմ առ դեմ և օգնել միմյանց (դեմ առ դեմ փոխազդեցություն),

գ. անհատական պատասխանատու լինել սեփական ուսումնառության համար (անհրաժեշտ հաշվետվություն և պատասխանատվություն),

դ.ունենալ և կիրառել խմբային աշխատանքի հմտություններ (սոցիալական հմտություններ),

ե. մտածել այն մասին, թե ինչպես կարելի է բարելավել սեփական խմբի աշխատանքի արդյունավետությունը (խմբային գործունեության վերլուծություն):

Այս պահանջների հիման վրա էլ Ջոնսոններն առանձնացնում են համագործակցային ուսուցման արդյունավետությունն ապահովող հետևյալ բաղադրիչները.

1. դրական փոխկախվածություն (համատեղ քննարկումներ, ընդհանուր նպատակին համատեղ աշխատելով հասնելու գիտակցում),

2. դեմ առ դեմ փոխազդեցություն (համատեղ մշակում, վերլուծում, խրախուսում և աջակցում են միմյանց),

3. անհատական հաշվետվություն և պատասխանատվություն (խմբի մաս է,ներկայացուցիչ, պատրաստ է ներկայացնել աշխատանքի արդյունքը, պատասխանատու է, գնահատվելու է յուրաքանչյուրը),

4. միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ

(միջանձնային փոխհարաբերություններում վստահության տսեղծումը, հաղորդակցումը և միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելը, կոնֆլիկտներ լուծելու հմտությունները),

5. խմբային գործընթաց (գործընթացի քննարկման փուլն է):

Հետագայում Պասի Սահլբերգը ավելացրեց ևս մեկը, որն ապահովում է համապատասխան պայմաններ մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար: Այդ է՝

6. փոխներգործուն (ինտերակտիվ) կառուցվածք ունեցող առաջադրանք,

որը մշակված է այնպես, որ այն կատարելու համար անպայման պահանջվում է թիմային աշխատանք (նյութի տրոհում, խմբի ներսում դերերի բաժանում և այլն):

Այս վերջին բաղադրիչը, սակայն, ավելի շատ հիմք է հանդիսանում և պայմաններ ապահովում մնացած բաղադրիչների դրսևորման ու կիրառման համար:

Համագործակցային ուսուցման գործընթացն սկսելու համար ես դասարանը բաժանում եմ փոքր խմբերի՝ առաջնորդվելով և՛ պատահականության սկզբունքով, և՛ տարաբնույթ առաջադրանքների ճիշտ պատասխանների խմբավորմամբ: Օրինակ՝ գունավոր թղթերի վրա խմբավորված դասկարգում են հետևյալ բառերը՝ միավանկ, երկվանկ, գաղտնավանկ ունեցող բառեր, ձայնավորով սկսվող (առաջին դասարան), պարզ, բարդ, ածանցավոր, առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր (երկրորդ –երրորդ դասարաններ): Նրանց առաջադրանքն է իրենց ընտրած բառը դասակարգել ճիշտ խմբում:Այսպես ձևավորվում են խմբերը:

Համագործակցային գործընթացը առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար դասապրոցեսում աշակերտների համատեղ ուժերով ստեղծում–մշակում են կանոններ: Այդ դեպքում միասնական աշխատանքի ընթացքում կանոնակարգի խախտումներ գրեթե չեն արձանագրվում: Երեխաները լրջորեն են վերաբերում իրենց ստեղծած կանոններին: Ամբողջ աշխատանքի ընթացքում դրանք երևում են էլեկտրոնային գրատախտակի վրա:

Հիմնական կանոնակարգը բաղկացած է լինում տասը կետից:Այս կանոնակարգը մեզ մոտ բավականին ճկուն է, և հնարավոր են փոփոխություններ, ավելացումներ և այլն: Դրանցից են.

- արժևորել խմբի յուրաքանչյուր անդամի կարծիքը,
- հստակեցնել նպատակները,
- համագործակցել խմբի ներսում,
- կատարել աշխատանքի արդար բաժանում,
- քննարկումներն անցկացնել գրադարանային ձայնով,
- հետևել ժամանակին,
- քաջալերել միմյանց,
- յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն,
- լինել հանդուրժող և աջակցել միմյանց,
- չխանգարել մյուս խմբի աշխատանքին,
- համակարգված աշխատել,
- չփչացնել դպրոցի գույքը:

Աշխատանքիս այս հատվածում կնկարագրեմ այն փորձը, որն անցկացրել եմ դասարանում: Փորձի նպատակն էր երեխաներին ուղղորդել ինքնաբերաբար համագործակցելու անհրաժեշտությանը: Համագործակցային գործընթացը կազմակերպելուց առաջ երեխաների հետ փորձել ենք բացահայտել, թե ինչ ենք հասկանում ասելով՝

- «ուս-ուսի որ տանք, սարեր շուռ կտանք»,

- «գյուղ կանգնի, գերան կկոտրի»,
- «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի »:

Երեխաներից յուրաքանչյուրն արտահայտվեց յուրովի՝ իր պատկերացմանն ու լեզվական ունակություններին համապատասխան: Մտքերը հետաքրքիր էին, անմիջական: Երեխաները փորձում էին բերել օրինակներ՝ հիմնավորելով իրենց իսկ սեփական կարծիքները: Այս աշխատանքի համար բոլորն արժանացան խրախուսանքի: Սրան հաջորդեց գործնական բնույթի այնպիսի առաջադրանք, որը նպատակ էր հետապնդում ինքնուրույն հանգել այն եզրակացությանը, թե համատեղ ուժերով դժվարությունները հաղթահարելու արդյունավետությունը որն է:

Այդ նպատակով ընտրեցի ուժեղ, միջին և թույլ կարողություններով օժտված երեք աշակերտ: Նրանցից յուրաքանչյուրը պետք է առաջադրանքներն ինքնուրույն կատարեր: Հանձնարարվեցին առաջադրանքները և յուրաքանչյուրից պահանջվեց սահմանված ժամանակահատվածում կատարել և ներկայացնել դրանք: Նշեմ, որ առաջադրանքները ծավալուն էին և աշխատատար: Գրեթե համոզված էի,որ երեխաներից ոչ ոք չէր կարող առաջադրանքներն ինքնուրույն կատարել և ժամանակին ներկայացնել: Քանի որ ես դրանք մտադրված բարդացրել էի, ինչն էլ միտում ուներ պարզելու՝ արդյոք երեխաները կդիմեն իրենց դասընկերների օգնությանը, թե՝ ոչ: Եվ ըստ նախօրոք սահմանված կարգի՝ նրանք իրավունք ունեին օգնություն խնդրել ընկերներից: Աշխատանքի մեկնարկից որոշ ժամանակ անց երեքն էլ բախվեցին դժվարությանը, օգտվեցին օգնություն ստանալու իրավունքից և դիմեցին իրենց ընկերներին: Համատեղ ուժերով հաղթահարեցին դժվարությունները և գործնականում հասկացան վերոնշյալ ասացվածքների բուն իմաստը:

Համագործակցային աշխատանքն, անշուշտ, ներառում է ուսումնական խնդիրների իրականացում ընկերների հետ՝ սոցիալական փոխազդեցության, հաղորդակցության և համագործակցության միջոցով, ինչպես նաև ակտիվ մասնակցություն հանձնարարված առաջադրանքների կատարմանը:

Եզրակացություն

Ամփոփելով փորձի արդյունքները և այլ ուսումնասիրողների պնդումներն ու տեսությունները, կարող ենք ասել, որ համագործակցային ուսուցումը կարող է միջոց հանդիսանալ՝ յուրաքանչյուրին դարձնել ակտիվ , ուժեղ և մտածող անհատ:

Խմբային աշխատանքի, հանդուրժողականության, միասնականության և փոխօգնության շնորհիվ երեխաներից յուրաքանչյուրը կարողացավ հաղթահարել իր առջև դրված խնդիրները: Սեփական փորձից ելնելով երեխաները համոզվեցին, որ դժվարությունները հաղթահարելի են արդյունավետ համագործակցության շնորհիվ:

Միևնույն ժամանակ աշակերտները պետք է հասկանան և զգան, որ իրենք չեն կարող խուսափել պատասխանատվությունից՝ սեփական առաջադրանքը փոխանցելով խմբի որևէ այլ անդամի: Յուրաքանչյուրը պետք է պատրաստ և ի վիճակի լինի զրուցելու, քննարկելու, ներկայացնելու իր խմբի առաջընթացը ինչպես ուսուցչին, այնպես նաև մյուս խմբերին: Համագործակցելու կարողությունը վաղ տարիքից խթանում է անհատի ձևավորմանը խմբում և նպաստում նրա հետագա կայացմանը, ինքնավստահ լինելուն, իրեն հասարակության լիիրավ անդամ զգալուն և այլն:

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուայթսոն

Գրականության ցանկ

1. Ջ. Գյուլամիրյան, «Խմբային աշխատանքը՝ որպես ուսուցման ստեղծագործական-հետազոտական ուղղվածության ապահովման միջոց», «Նախաշավիղ» 7-8, 2001թ.
2. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ (Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ): Երևան: Անտարես,2006թ.
3. Համագործակցային ուսուցում. Վերապատրաստողի ուղեցույց-ձեռնարկ: Երևան: Անտարես,2006թ.
4. Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան,Հ. Խաչատրյան «Մայրենի 2-4» ուսուցչի ձեռնարկ
5. Երևան «Մանմար» 2013թ.